Թէեւ Բրիտանական թանգարանին ներկայացուցիչները, որոնք ներկայ էին ժողովին, չեն ստորագրած հռչակագիրը, «սակա չի նշանակեր, թէ լիովին զօրավիզ չենք անոր: Ընդհակառակը... իրականութեան մէջ միայն մենք կ'ուզէինք, որ հռչակագիրը աւելի միջազգային բնոյթ ունենար եւ ոչ թէ կեդրոնական տարակարծութեան մը կամ իրի մը վրայ», կ'ըսէ Բրիտանական թանգարանին մէկ բանբեր՝ ակնարկելով էլկինի մարմարներուն:

Միակ իրերը, որոնք յատուկ կերպով յիշատակուած են 4 պարբերութեանէ բաղկացած հռչակագիրին մէջ, «դասական Յունաստանի քանդակներն» են: Հռչակագիրը կ'ըսէ. «Աշխարհի տարածքին հանրային թանգարաններու հաւաքածոները ընդգծեցին յունական քանդակագործութեան կարեւորութիւնը մարդկութեան համար եւ անոնց յարատեւ արժէքը աշխարհին մէջ: Արեւմտեան աշխարհին մէջ յունական արուեստին գնահատումը շատ աւելի ուժեղ է, որովհետեւ անիկա կը ցուցադրուի եւ կ'ուսումնասիրուի այլ մեծ քաղաքակրթութիւններու անմիջական ներկայութեան կողքին»:

Բրիտանական թանգարանը վերջին տարիներուն թիրախ է միջազգային բուռն արշաւի մը, որ կը միտի շուրջ երկու հարիւր տարիէ ի վեր թանգարանին մէջ ցուցադրուող Փարթենոնի մարմարները վերադարձնել իրենց բնօրրանը՝ Աթէնք:

Մարմարները կու գան Ն.Բ. 5րդ դարէն եւ Լոնտոն տարուած են Յունաստանէն, 19րդ դարու սկիզբը, երբ երկիրը կը գտնուէր թրքական իշխանութեան տակ: Կոստանդնուպոլսոյ մէջ Բրիտանիոյ դեսպան Լորտ Էլկին գտնոնք փոխադրած է 10 տարուան ընթացքին:

Յունաստան Փարթենոնի մարմարներուն վերադարձը պաշտօնապէս պահանջեց 1983ին, սակայն Անգլիա կտրականապէս մերժեց ընդունալը՝ ըսելով, որ մարմարներուն պահպանութեան իրենց ծառայութիւնը լաւագոյնս պիտի վարձատրուէր գտնոնք Բրիտանական թանգարանին մէջ պահելով:

Փարթենոնի մարմարներուն վերադարձի Քանաստանի մարմարներու քարտուղար Սթիվ Էլթընի համաձայն, աշխարհահռչակ թանգարաններու կողմէ հրատարակուած հռչակագիրը «կ'ապացուցէ մարմարները Աթէնք վերադարձնելու արշաւին հետզհետէ սաստկացող ճնշումը»:

Իրօք, հռչակագիրը կարելի է նկատել «մարմարներուն վերադարձը կանխագուշակող երեւոյթ եւ այլ թանգարաններու այն մտաւախութիւնը, թէ մարմարները հաւանաբար պիտի փոխադրուին Աթէնք», կ'ըսէ Էլթընը:

Լորտ Էլկին 1816ին այսօրուան գինով 5 միլիոն տոլարի կաշառք մը վճարած էր, որպէսզի Փարթենոնի մարմարները Աթէնքէն դուրս բերէր եւ վաճառէր Բրիտանական թանգարանին: Վերջին երկու տարիներուն մարմարներուն վերադարձին ջատագովները ճիշդ կը թափեն, որ անոնք Յունաստան վերադառնան մինչեւ 2004ի կէսերը, երբ Աթէնքի մէջ տեղի պիտի ունենան ամառնային Ողիմպիական խաղերը:

Յունաստանի պետութիւնը յայտարարած է, թէ Աքրոփոլիսի մէջ պիտի կառուցէ օդի ապականութեան դէմ պաշտպանուած եւ հաւասարակշռուած կլիմայով նոր թանգարան մը, ուր կարելի պիտի ըլլայ էլկինի մարմարները միացնել Փարթենոնի միւս մարմարներուն: Յունաստան նոյնիսկ առաջարկած է թանկարժէք հնութիւններ տրամադրել Բրիտանական թանգարանին, փոխարէնը՝ երկարատեւ փոխատուութեամբ էլկինի մարմարները ստանալու համար:

Վերջերս կատարուած հարցախոյզներու համաձայն, բրիտանացիներուն մեծամասնութիւնը համաձայն է, որ Փարթենոնի մարմարները Յունաստան վերադառնան: Սակայն Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյը կը հաւատայ, թէ անոնք պէտք է Բրիտանիա մնան:

Էլթընի համաձայն, էլկինի մարմարները Լոնտոնի մէջ ցուցադրելու պատճառաբանութիւնները թերեւս արդարացի էին քանի մը տասնամեակ առաջ, «սակայն անոնք այլեւս ի գորու չեն հետզհետէ համաշխարհայնացող աշխարհին մէջ, ուր կը զարգանայ մշակութային զբօսաշրջութիւնը»:

Նմանօրինակ վէճի նիւթ են Պենինի պրոնզները, որոնք կը ցուցադրուին Լոնտոնի եւ Պերլինի մէջ, իսկ Թուրքիա կը պահանջէ Պերկամոնի բազիլը, որ ներկայիս կը ցուցադրուի Պերլինի մէջ:

Արուեստի Մեթրոպոլիթըն թանգարանը դատական հետապնդումէ մը ետք, 1993ին դժկամութեամբ Թուրքիոյ վերադարձուց 363 կտոր ոսկի, արծաթ, թանկագին քարեր, գեղանկարներ եւ քանդակներ:

ԿՈՐՍՈՒԱԾ ՄԱՐՄԱՐՆԵՐ

●1799-1803

Թամրս Պրուս, Էլկինի 7րդ Լորտը, որ նաեւ Բրիտանիոյ դեսպանն էր Օսմանեան կայսրութեան մէջ, կը սկսի հին յունական քանդակներ եւ արտարապետական ցուցմեր հաւաքել: Ան Աթէնք մէջ Փարթենոնի տաճարն էլ հնագործան այլ կառոյցներ հնութիւններու կը պոկէ գանձը Անգլիա փոխադրելու համար. Բրիտանիոյ խորհրդարանին մէջ տարակարծութիւններ կը ստեղծուին եւ հետաքննութիւն տեղի կ'ունենայ:



րախ դառնալէ ետք Լորտ Էլկին կը յաջողի իր հաւաքածոն ցուցադրել համրութեան:

Բրիտանիոյ թագաւորը 1812ին Էլկինի մարմարները կը գնէ 35 հազար փաունտի՝ գանձը Բրիտանիա փոխադրելու համար Լորտ Էլկինի կատարած ծախսերուն նուազ քան կէսը վճարելով:

●1983

Յունաստանի պետութիւնը կը պահանջէ մարմարներուն վերադարձը, սակայն Բրիտանիա կը մերժէ, եւ հարցը կը մնայ անլոյծ:

●1802-1812

Նաեւ Անգլիա կ'ուղղուին իրենց հնագործան բեռներով: Անոնցմէ մէկը կը կորսուի Յունաստանի ափերուն, փոթորիկի մը ընթացքին, սակայն հնութիւնները կը փրկուին:

Լորտ Էլկին բրիտանական դեսպանատուներ կը հեռանայ 1803ին եւ Անգլիա կը հասնի 1806ին:

Յաջորդ 10 տարիներուն Լորտ Էլկինի հաւաքածոն կը մնայ անհատական սեփականութիւն, հակառակ իր փափաքին: Երկար ժամանակ քննադատութեան թի-

Բրիտանական թանգարանին հովանաւորները վերջերս հաստատութիւնը հռչակեցին «մարդկութեան ծառայող ճշմարտապէս տիեզերական թանգարան մը, որ ամէն տարի ձրիօրէն կ'ընդունի տարեկան 5 միլիոն այցելու»:

Բրիտանական թանգարանին պատասխանատուները կը հաւատան, թէ թանգարանը Էլկինի մարմարներուն ցուցադրութեան «լաւագոյն վայրն է, որ երբեւեց կարելի է գտնել»: Թանգարանին տնօրէնը՝ Նիլ ՄքԷրկըրը վերջերս ըսած է. «Մարմարները աշտուղ պէտք է մնան, եթէ թանգարանը պիտի շարունակէ իրագործել իր նպատակը, այսինքն՝ աշխարհին ցոյց տալ աշխարհը»:

Քանաստան ոչ մէկ թանգարան կամ պատկերասրահ ստորագրած է արուեստի միջազգային հաստատութիւններու կողմէ հրատարակուած հռչակագիրը: Օնթարիոյի Արուեստի պատկերասրահին տնօրէնը թէեւ չէ կրցած ներկայ ըլլալ Միւնխի ժողովին, սակայն ըսած է, որ եթէ իրեն առաջարկուէր ստորագրել հռչակագիրը, պիտի չմերժէր:

«Պէտք է ընդունինք, թէ թանգարաններ մեծապէս կը սատարեն մշակոյթներու միջեւ դադարներու փոխանակութիւնը, ըսած է անունաւ պէտք է նկատի ունենանք, որ առանձին պարագաներու յատուկ դատողութիւններ պէտք է կատարել»:

«ՅԵՂԱՇՐՋՈՒՄ»՝ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԷՋ

ԳԱՀԻՐԵԻ ԵԳԻՊՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱՐԻԻՐԱՍԵԱԿԸ ԿԸ ՆՇՈՒԻ ՍԵՑ ՇՈՒԲՈՎ: «ՏԻ ԷՍՈՇԻԵՅԹԵՑ ՓՐԷՍ» ԿԸ ԳՐԷ.

Տասնամեակներէ ի վեր Գահիրէի հռչակաւոր Եգիպտական թանգարանը կարիքը ունէր ինքզինք բնորոշելու եւ արդիականացնելու: Անոր պատասխանատուները կ'ըսեն, թէ թանգարանին յեղաշրջումը սկսած է:

«Կը նմանի անկարելի առաքելութեան մը», կ'ըսէ Ջահի Հաուս, որ Դեկտեմբեր 9ին թանգարանին 100ամեակին աւիթով արտասանած իր խօսքին մէջ ներկայացուց կառոյցը հիմնովին վերադասաւորելու Եգիպտոսի Հնագիտական գերագոյն խորհուրդին որոշումը:

Հռչակաւոր Եգիպտաբանը նշեց, թէ Եգիպտական թանգարանին վերադասաւորումն ու ընդարձակումը պիտի տեւէ տարի մը եւս: Ծրագիրը կ'ընդգրկէ նոր բաժանմունքի մը կառուցումը: Յուցադրուած իրերուն մէկ երրորդը փոխ պիտի տրուի աշխարհի տարածքին տարբեր թանգարաններու՝ թեթեւեւելու համար պատկերասրահներուն գերխճողումը: Նաեւ Եգիպտաբանութեան յատկացուած աշխատանքի սենեակներ պիտի բացուին մասնակցութեւ համար:

Եգիպտոսէն, Եւրոպայէն եւ Հիւսիսային Ամերիկայէն թանգարաններու պատասխանատուներ ներկայ էին թանգարանին 100ամեակի տօնակատարութեան: Հաուս անոնց ուղղուած իր խօսքին մէջ նշեց, թէ թանգաւորողուն իր խօսքին մէջ նշեց, թէ թանգարանին լքուած նկուղները այժմ մաքրուած են երկար ժամանակէ ի վեր պահ դրուած հնագիտական իրերէն, եւ թէ՛ յառաջիկայ օրերուն ցարդ հանրութեան անմասօթ 250 իրեր պիտի ցուցադրուին թանգարանին նոր պատկերասրահներէն մէկուն մէջ:

Պատասխանատուներու համաձայն, նոր պատկերասրահին ամէնէն ուշագրաւ իրերէն

մէկը պիտի ըլլայ Եգիպտացի դպիրի մը 4300 տարուան կրանիթէ արձանը:

Եգիպտական թանգարանին հարիւրամեակին աւիթով բարելաւուած է անոր պատկերասրահներուն լուսաւորումը եւ նոր իրեր կը ցուցադրուին յատուկ բաժանմունքներու մէջ: Սակայն տակաւին աշխատանքը երկար է: Թանգարանին սպիտակ մարմարէ սալիկները մաշած են, որոշ պատկերասրահներու մէջ լուսաւորումը աղօտ է եւ իրերու նկարագրութիւնը բովանդակող թուղթեր ստորուած են:

Ապահովական խիստ միջոցառումներ հաստատուած են թանգարանին շուրջ, օտար զբօսաշրջիկներու դէմ իսլամ ծայրայեղականներու կողմէ շարք մը յարձակումներէ ետք, որոնցմէ մէկը տեղի ունեցաւ թանգարանին անմիջապէս դուրս, 1997ին: Տասնեակներով ոստիկաններ կը շրջին շէնքին շուրջ կողմը:

Վերանորոգութեան ծիրին մէջ ճարտարապետական նոր դասական ոճով կառուցուած շէնքին արտաքին պատերը ներկուած են մուկ վարդագոյն: Կառոյցը ինքնին պիտի կապուի 350 միլիոն տոլար արժողութեամբ նոր թանգարանի մը, որ պիտի կառուցուի Գահիրէի արեւմուտքը, Գուրգերուն մօտ, եւ այլ թանգարանի մը՝ Գահիրէի միջնագրեան թաղամասերուն մէջ:

Այժմու թանգարանին մէջ պիտի ցուցադրուին նախափառուական ժամանակներէն մինչեւ արդի ժամանակներու հնութիւններ, իսկ երկու նոր թանգարանները, որոնք հանրութեան ղիմաց պիտի բացուին մինչեւ 5 տա-

Ամսթերտամէն անցնող ճամբորդներ պիտի կարենան Հոլանտայի արուեստի ժառանգութեան ծանօթանալ միջազգային Շիֆոլ օդակայանին մէջ բացուած նոր պատկերասրահի մը մէջ: 17րդ դարու գեղանկարիչներէ միլիոնաւոր տոլար արժողութեամբ 10 գործեր, ներառեալ Ռամպարնիթ մը, կը ցուցադրուին հոն:

Պատկերասրահին բացումը կատարուեցաւ այս շաբաթասկիզբին, հակառակ ապահովական հարցերու: Անցեալ շաբաթավերջին երկու գեղանկար գողցուած էր Ամսթերտամի կեդրոնական մասին մէջ գտնուող Վան Կոկի թանգարանէն:

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՌԱԶԱՅԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»Ի հետ կապուելու համար հեռաձայնել հետևելով թիւերուն: -258526, 260115 եւ 241274:

Գեղանկարները կը ցուցադրուին նորակառոյց պատկերասրահի մը մէջ, եւ զանոնք կարելի է դիտել հսկայ ապակի մը ետին, որ կը ծառայէ պատանները պաշտպանելու օդանաւերուն ձայնին թրթռացումներէն: Զետեղուած է նաեւ բարձր արհեստագիտութեամբ սպահովական համակարգ մը, եւ պահակներ 24 ժամ կը հսկեն գեղանկարներուն: Օդակայանին պատկերասրահ եւ Ամսթերտամի աշխարհահռչակ Ռայքմիլքուսմը, ուր 10 պատաններ սովորաբար կը ցուցադրուին, այժմ կ'օրծնկերներ են եւ կը միտին զբօսաշրջիկներ ներգրաւելու: Պատկերասրահը մատչելի պիտի ըլլայ միայն Շիֆոլ օդակայանէն անցնող ճամբորդներուն:

Ներկայիս Ռայքմիլքուսմը միլիոնաւոր տոլարի վերանորոգութեան ծրագիր մը կ'իրագործէ եւ իր պատմական հաւաքածոներէն թանկարժէք իրեր կը տրամադրէ աշխարհի տարածքին տարբեր թանգարաններու ու պատկերասրահներու:

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒՈՅԵԱՆ-ՄՐԱՊԵԱՆ

www.lemagan.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՂԱՍԱՍԿՈՍ ՂԱՍԱՍԿՈՍ
ԼՈՒՍՆԹԱԳ ՄԵԼԻՔԵԱՆԻ մահուան քառասուն օրը...

ԵՆԼԱՆՏ ԱՃԵՄԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով...

ԱՆԱՅԻՍ ԳԱՍԱՊԵԱՆԻ մահուան քառասուն օրը...

ԱՅԼՃԱՐ ԱՅԼՃԱՐ
ԳԵՆՐԳ ՃՈՐՃ ԹԱՃՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին...

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ
Հովանավորության գերծ. ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ

ՀՈԳԵՀԱՆԳՍԵՄՆ ՊԱՇՏՕՆԻ
Հ. Գարակեօզյան հաստատության հիմնադիր բարերարներու՝ ՄԻՀՐԱՆ, ԶԱՊԵԼ, ԼԵՅԼԱ

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5321 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for the crossword puzzle.

- ՇՈՒՐԱԿԱՆ 1. Դառնակից, հալածակից: 2. Անպարտ - երբ, տակալին: 3. Բնակուած վայրեր - Մանկեռ:

ԹԻԻ 5320 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԹՈՒՍԸ

ԱՅԼՃԱՐ ԱՅԼՃԱՐ
ՍՕՍԻ ՈՒՐՅԱԼԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին...

ԱՐՈՒՍԵԱԿ ՊՈԶԻԿԵԱՆԻ (ծնեալ՝ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ) մահուան Ա. տարելիցին...

Table with 2 columns: 'ՍԱԿԱՐԱՆ' and 'ՍՈՒԿԻ'. Lists names and amounts.

ՆՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆՆ

Վերագտած էք ձեր կենսասիրտը և անհատական ձեր անձը...

Վերագտած էք ձեր կենսասիրտը և անհատական ձեր անձը...

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶՐՕՍԱՇԵՐՋՈՒԹԻՒՆ

«ԽՕՍՈՂ ՔԱՆԴԱԿՆԵՐ» ՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Համրայի «Ձիթո Հաուզ» ցուցարարի ներկայիս կը հիրարկուի...


Օփերայի երեկոյ. Ելոյք կ'ունենան Քաբանա Փրիմա...

Table with 2 columns: 'ՀԵՌԱՏԵՍԻԼ' and 'ԵՆ. ՊԻ. ԵՆ.'. Lists TV and radio programs.

ՆՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆՆ
Վերագտած էք ձեր կենսասիրտը և անհատական ձեր անձը...

ԱԶԳԱԿ 50 ՏՆՄՐԻ ԱՄՆԱԶ
ՀԱՄԱՅՆԱԿԱՐՆԵՐԸ ՏԱԿԱԻՆ ԶՊԱՏԱՍԽԱՆԵՑԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԱՄԱԿԻՆ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

Հ. Մ. Ը. Մ. - ՌԻԱՏԻ ՖԵՅԹՐՈՒՆ՝ 69-70

Լիբանանի պասքեթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, երէկ երեկոյեան Հ. Մ. Ը. Մ. ի ներկայացուցչական խումբը կրեց եղանակի իր չորրորդ յաջողական պարտութիւնը, այս անգամ Ռիատի Ֆէյթրուինէն, մէկ կէտի տարբերութեամբ՝ 70-69: Ա. կիսախաղին թէեւ Հ. Մ. Ը. Մ. 43-35 արդիւնքով ետ մնացած էր, սակայն երրորդ քորթրին անկա երկու կէտի առաւելութեան մը հասաւ (54-52):

Հ. Մ. Ը. Մ. ի յաջող մրցակիցն է Լիբանանի Բանակի հաւաքականը: Մրցումը տեղի կ'ունենայ վաղը՝ Թատտոսի դաշտին վրայ:

ԱՅՍՕՐ՝ ՍԱՃԵՍ - ՇԱՆԿԻԼ

Լիբանանի պասքեթպոլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան 8րդ հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենայ կարեւոր ճակատում մը, երբ ընդհանուր դասակարգման պարագլուխի դիրքը գրաւող Սաճէս կը մրցի Շանկիլի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ Ֆուատ Շեհապի դաշտին վրայ ժամը 21:30ին:

Սաճէս, որ իր ունեցած կուլիվրէյնին շնորհիւ կը գերազանցէ Շանկիլը (2րդ) եւ Ռիատին (3րդ) անոնց նման կրած է մէկ պարտութիւն:

Ստորեւ՝ 8րդ հանգրուանի մրցումներուն յայտարարելը:

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Սաճէս - Շանկիլ	21:30ից	Ֆ. Շեհապ
ՇԱ.ԲԱ.Թ		
Սանքրալ - Պլու Սթարզ	16:00ից	Սանքրալ
Անիպալ - Ռիատի	17:00ից	Ջահլէ
ԿԻՐԱԿԻ		
Անդրանիկ - Ղազիր	16:00ից	Անդրանիկ
Քահրապա - Սատարա	18:00ից	Քահրապա

●8րդ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ մրցումներուն նախօրեակին այժմ դասակարգումը կը ներկայացնէ հետեւեայ պատկերը:

	ԿԵՏ	ՆՇ	ՄՏ.
1.- Սաճէս	19	670	529
2.- Շանկիլ	19	556	467
3.- Ռիատի	19	628	528
4.- Անիպալ	15	570	545
5.- Պլու Սթարզ	15	606	561
6.- Սանքրալ	13	520	609
7.- Անդրանիկ	13	567	596
8.- Սատարա	9	542	616
9.- Ղազիր	9	468	584
10.- Քահրապա	9	523	615

«ՅԵՂԱՇՐՋՈՒՄ»՝ ԵԳԻՊՏԱԿԱՆ...

Շարունակուած 7րդ էջէն

րի, պիտի պարփակեն Եգիպտական թանգարանէն բազմաթիւ հնութիւններ, ինչպէս՝ Թուրան-խանի գանձերը:

Եգիպտական թանգարանը կառուցուած է 5000 իրերու ցուցադրութեան համար: Սակայն հոն ամփոփուած են 160 հազար իրեր, որոնց հազիւ մէկ երրորդը կը ցուցադրուի: Փարաունական, դպտիական, լուսա-հռոմէական եւ իսլամական բազմաթիւ հնութիւններ պահուած կը մնան նկուղներու մէջ:

Հաւուսի համաձայն, երկու նոր թանգարաններուն կառուցումը պիտի չնսեմացնէ Գահիրէի կեդրոնական շրջանին մէջ բոլորին ծանօթ թանգարանին կարեւորութիւնը: «Եգիպտական թանգարանը կարեւոր մէկ մասն է մեր պատմութեան ու ժառանգութեան», - կ'ըսէ ան: Այն վայրկեանին, երբ Գահիրէի թանգարանը կը սնունձ, պատմութիւն կը շնչեն:

Ուրախ լուր... սակերը նուազեցան

43" PROJECTION TV \$2269 +VAT
այժմ 50" միայն 2999\$ +VAT

Պրոյեկտիոնային հեռուի տեսիլատեսիլի համալիրը
ՀԵՆՐԻՍ 01-241000
3րդ մասը, Սանքրալի դաշտին, Կառուցման արտոնագրով

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ

TOSHIBA

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍՄԻՈՆԻ ԺՈՂՈՎ

ԿԻՐԱԿԻ ՕՐ՝ Շ.Մ.Ը.Մ. - ՈԱՍԻՆԿ

Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնը, շաբաթական իր գումարած ժողովին, վաւերացնելէ ետք անցեայ շաբաթավերջին արձանագրուած մրցումներուն արդիւնքները, յայտնեց, թէ Ա. դասակարգի մրցումները մինչեւ յառաջիկայ 4 Յունուար 2003 դադար կ'առնեն, նկատի ունենալով, որ Լիբանանի ֆուտպոլի պագային խումբը կը մասնակցի Քուէյթի մէջ տեղի ունեցող Արաբական ախոյեանութեան 8րդ մրցաշարին:

Անցեայ շաբաթավերջին տեղի ունեցած կարգ մը սխալներուն իբրեւ հետեւանք, ֆետերասիոնը երէկ իրաւարարներ՝ Չապարիա Ապու, Իպրահիմ Լարիս եւ Սամէր Մարի երկուքական ամփոփ կախակայեց, իսկ այլ իրաւարար մը՝ Մոհամետ Մանուր անոնց արտաքին կախակայեց, մինչեւ անոր հարցին ամբողջական քննարկումը:

Շապապ Սահէյի խմբակէտ Եասէր Մանուր, երկու ամփ-

ոսկ կախակայեցաւ, նկատի ունենալով, որ ան իր խումբին խմբակայեան էր: Սահէյի պատասխանատուներէն Չապարիա Ռաւիան երկու ամփոփ կախակայեցաւ իրաւարարին վրայ յարձակած ըլլալուն յամար:

Իսկ մէկական մրցումով կախակայեցան (իրենց երրորդ դէղին քարտը ստացած ըլլալուն համար) Ապտէլ Ուահայ Ապու Հէյ (Ախա Ալէյ), Պուրոս Բարամ (Սալամ), Պիլալ Հաժո (Թատամոն Սուր), Լուիս Ֆերնանտէս (Շապապ Սահէյ), Հայտար Ապտէլ Ռապպա

Հասան (Անսար) եւ Մարսիլիօ Սիլվա (Օլիմպիք):

Ֆետերասիոնը յայտնեց նաեւ, թէ Հ.Մ.Մ. - Իպահ Պըրժ Շիմալի մրցումը, որ սկսուած էր տեղի պիտի ունենար 30 Նոյեմբերին, այժմ այդ մրցումին համար որոշուած է նոր թուական մը՝ Երեքշաբթի, 21 Յունուար 2003, նկատի ունենալով, որ հարաւոր ամիսը արդարացի գտնուեցաւ իր բողոքին մէջ, որովհետեւ ֆետերասիոնին նամակը (մրցումի փոփոխութեան գծով) անոր ուշացումով հասած էր:

Ստորեւ՝ Բ. դասակարգի ախոյեանութեան 7րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը (բոլոր մրցումներն ալ տեղի պիտի ունենան ժամը 2:15ին):

ԱՅՍՕՐ	ԴԱՇՏ
Ռիատա Ուայ Ատապ - Թատամոն Նապարիէ	Թրիփոլի
ՇԱՐԱԹ	
Շապապ Թրիփոլի - Նահտա Պար Էլիաս Թրիփոլի	Պ. Համուտ
Հ.Մ.Մ. - Անիլ Սայտա	
ԿԻՐԱԿԻ	
Հ.Մ.Մ. - Ռատիկ	Պ. Համուտ
Մամայ Այնճար - Իժրիմանի	Խիարա
Իպահ Պըրժ Շիմալի - Շապապ Խիամ Իպահի դաշտ	

ԵՒՐՕ-2008Ի ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԸ՝ ԱՒՍՏՐԻՈՅ ԵՒ ԶՈՒԻՑԵՐԻՈՅ ՄԷՉ



Լեւոն Երանցեան կ'ունում մամուլի թղթածրարները

տրամադրած էին: Եւրո-2008ի բացման մրցումը տեղի պիտի ունենայ Պեռնի նորակա-

փակման մրցումը տեղի պիտի ունենայ Վիեննայի «Էռնսթ Հափէլ» դաշտին մէջ, որ կրնայ հիւրընկալել 50 հազար համակիր:

Իւրաքանչիւր երկիր այս մրցաշարին համար պիտի տրամադրէ չորս դաշտ, որ կրնայ հիւրընկալել նուազագոյնը 30 հազար համակիր:

Վերջին դաշտը, որ պիտի կառուցուի իննսպ-րուբի մէջ պիտի աւարտի 2006ին:

Եռանասրնի կատարած յայտարարութեանէն ետք

վերաբերողները վստահաբար, որ եղան Զուիցերիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահ Ռաֆ Զլոբգովը եւ Աւստրիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահ Զերտրիչ Սթիբլըրը: Աւստրիա, որ ունի 8 միլիոն բնակչութիւն, ՖԻՖԱին անդամակցած է 1904ին, իսկ Եւր. Բ. Բ.Ֆ. Ա.ին՝ 1954ին: Անիկ հիմնուած է 18 Մարտ, 1904ին: Զուիցերիա ունի 7 միլիոն բնակչութիւն: Հազար բնակչութիւն:

ԱՅՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՍՅԻՆ
ՄԱՐԲԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

RENT AND SALE

• Over Bed Table
• All Kinds Of Oxygen
We Also Provide
• Laboratory services
• Physiotherapist
• Nurses Aids
• P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՏՐՈՒ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՍԵՆՏԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ՃԵՆԸ, Բ. ՅԱՐԿ
ԵՏՈ. (01) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.

ԲՐԻՏԱՆԻԱ ԿԸ ԿՐԿՆԵ ԻՐ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ ԻՐԱՔԻ ԳԵՄ

Բրիտանիա պիտի նախընտրէ, որ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը երկրորդ բանաձևը որդեգրէ պարտադրելու համար Իրաքի, որ ապագինուի սակայն պիտի չպնդէ, որ այդպիսի բանաձևը որդեգրուի, յայտնեց բրիտանացի բարձրաստիճան պաշտօնատար մը երէկ Եգիպտոսի մէջ:

Նախագահ Հիւսնի Մուպարաքի հետ ունեցած տեսակցութեան ավարտին կատարած մամուլի ասուլիսին ընթացքին, Մալք Օպարայը ըստ, որ Լոնտոն երկրորդ բանաձևը կրնայ նախընտրել, սակայն անպայման անհրաժեշտութիւն չի նկատեր զայն: Օպարայը ակնյայտ, որ ամէն ինչ կախեալ է ներկայացուած թղթածրարին ուսումնասիրութեան լոյսին տակ հրապարակելիք եզրակացութեան: Օպարայը ըստ նաեւ, որ Բրիտանիա կ'ուզէ ամէն միջոցի դիմել խուսափելու համար պատերազմէ մը: Սակայն եթէ Իրաքի նախագահը արգելակէ քննիչներուն աշխատանքը, միջազգային ընտանիքը յարմար որոշում մը պիտի յայտարարէ:

Բրիտանիոյ վարչապետ Թոնի Դեյլը, սակայն հարցազրոյցի մը ընթացքին ըստ, որ անհրաժեշտ չէ Իրաքի վերաբերեալ երկրորդ բանաձևը մը ՄԱԿի մէջ:

● ՍՈՒՐԻՅԱ Նախագահ Պաշտաբ Ասատ երէկ շեշտեց, որ ՄԱԿի կը վերապահուի Իրաքի հանդէպ որեւէ միջոցառում որդեգրելու որոշումը:

(ԱՅՓ)

ԱՌԵՏՈՒՐԻ ՄԱՐԶԻՆ ՄԵՋ ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ե. ՄԻՈՒԹԻՒՆ - ԻՐԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՐԻՒՔՍԻՆ, 12 (ԱՅՓ).- Եւրոպական Միութիւնը Հինգշաբթի օր առեւտուրի գործակցութեան համար բանակցութիւններու ձեռնարկեց Իրանի հետ: Եւրոպական Միութիւնը առեւտուրի կապերուն զուգահեռ Իրանի բանակցութիւններուն հետ պիտի արձարծէ քաղաքական ու մարդկային իրաւանց մարզերուն առնչուող հարցեր:

Երկու պատուիրակութիւններուն առաջին հանդիպումը տեղի ունեցաւ Պրիւքսի մէջ: Առաջին նիստին, անոնք արձարծեցին ընդհանուր հարցեր, որոնց կարգին են Միջին Արեւելքի տագնապը, մարդկային իրաւունքներն ու կորիզային ապագինումը: Երկրորդ նիստին, երկու պատուիրակութիւնները քննարկեցին առեւտուրի մարզին մէջ Իրանի եւ Ե. Միութեան միջեւ գործակցութեան կարելիութիւնները:

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԷՋ

ԱՀԱՐԵԿԻՉՆԵՐՈՒ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԿԸ ՀԱՍՏԻ ՓՈՒԹԻՆ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ յայտարարած է, թէ պիտի շարունակէ Չեչենիոյ մէջ «ախաբեկիչներ» հետապնդելու գործողութիւնը, մինչ ցուցարարներ, կեդրոնական Մոսկուայի մէջ քայլարշաւի մը ընթացքին, կը պահանջէին վերջ տալ աւելի քան 3 տարուան տագնապին:

Փութին կնքած է հրամանագիր մը, ըստ որուն, նոր սահմանադրութեան մը գծով հանրաքուէ մը կայացուի Չեչենիոյ մէջ՝ ընտրութիւններու ճամբան հարթելու համար: Ռուս դեկավարները կը յուսան, որ ընտրութիւնները իրենց իշխանութիւնը օրինական պիտի դարձնեն:

Վերահաստատելով իր մերժողական կեցւածքը՝ չեչէն անջատողականներու հետ խաղաղարար բանակցութիւններու գծով, Փութին ըսած է, որ Չեչենիոյ մէջ «ախաբեկիչական» գործողութիւնները պիտի չվտանգուին քաղաքական որեւէ քայլերու կողմէ:

(ԱՅՓ)

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱՊ

ԹՈՒՐԵ ԿԻՊՐԱՑԻՆԵՐԸ ՎԵՐԱՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՉՍՏՈՐԱԳՐԵՆ

Թուրք կիպրացի պատուիրակ թահսին էրթուրու լուրջու երէկ հերքած է, թէ Բոփենհակընի Ե. Միութեան վեհաժողովին կիպրոսի համար մշակուած ՄԱԿի վերամիացման համաձայնութիւնը պիտի ստորագրուի:

Ան դէպի Բոփենհակըն ճամբուն վրայ յայտնած է, թէ Դանիոյ մայրաքաղաքը կը մեկնի ընդգծելու բարի կամեցողութիւնը եւ զօրակցութիւնը, գոր թրքական կողմը կը ցուցաբերէ բանակցութեանց դրժնթացին հանդէպ:

Ան դիտել տուած է. «Մեր կարծիքով, ստորագրուելիք պատրաստ փաստաթուղթ մը գոյութիւն չունի», ակնյայտով «մեր դիմաց գտնուող փաստաթուղթին շուրջ բանակցութիւններ տեղի չունեցան յոյն եւ թուրք կիպրական կողմերուն միջեւ»:

Երթուրու լուրջու նաեւ քննադատած է կիպրոսը անդամ ընդունելու հրաւերը՝ ըսելով, որ անիկա «կատարուած իրողութիւն մըն է»:

Կիպրոսի նախագահ Կլաֆոս Բերիտէս պատուիրակութեան մը ընկերակցութեամբ կը մասնակցի Բոփենհակընի վեհաժողովին:

Կիպրոսի մէջ ՄԱԿի պատուիրակ Ալվարո տէ Սոթօ երէկ յայտնած է, թէ զգուշաւոր կերպով յուսալից է, թէ Ե. Միութեան վեհաժողովին զուգահեռ մետասաներորդ վարկեանի համաձայնութիւն մը պիտի գոյանայ թուրք եւ յոյն կիպրացիներուն միջեւ: Ան կը խօսէր Բոփենհակընի մէջ տեսակցելէ ետք Բերիտէսի հետ:

Միւս կողմէ, կիպրոսի մէջ Մ. Նահանգներու յատուկ պատուիրակ թուրք Ուէսթըր երէկ յայտնած է, որ մեծ հաւանականութիւն գոյութիւն ունի, թէ կիպրոսի հարցին շուրջ համաձայնութիւն մը պիտի գոյանայ:

(ԱՅՓ)

3. 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԳԱՅԻՆ...

Շարունակուած 2րդ էջէն

քաջալուններու հարապատ պատկերով: Վեմ եւ պնդագոյն համերաշխութեան պատուանդանով, Դաշնակցութիւնը պարտադրեց միաւորները ոչ միայն ընդհանրական շահերու գիտակցութեան նետարդային կապերով պօղեց տարատեսակ տարածութիւններու մէջ, այլեւ նախնիներու սնուցիչ պորտակապը եղաւ նորահաս սերունդներուն համար՝ ամենամարտկոչի եւ այլապէս ժամանակներու անգամ: Դաշնակցութեան հոգեպարար շունչով հայու եսին մէջ սահմանափակուած եւ կքած ինքնապահպանման բնակչոյ գաղափարական յեղափոխիչ փնտրութեան շրջանում պայտի գոյապայքարի յղացքով, եւ ապա վերապրելիութեան գաղափար ամրագրուեցաւ ազգայնապաշտ «յարատեւ կոնի»ով:

Հայ ժողովուրդը Դաշնակցութեան մէջ իր անկախաբար աշխարհագրական հասկացողութեան քարձ:

ԱՆԳԱՐԱ ԲԱՂԱԲԱԿԱՆ...

Շարունակուած Ա. էջէն

Թեան մասին:

Յունաստանի վարչապետ Բոսթաս Սիմիթիսի հետ Բոփենհակընի մէջ տեսակցութեան մը ետք, կիւլ ըսած է, որ Թուրքիա արդէն իսկ երկար ճամբայ կտրած է՝ Միութեան համար բարեկարգութեան ճամբով: Ե. Միութեան անդամակցութեան չափանիշներուն հասնելու համար:

«Մեր իրաւունքն է շատ յստակ թուական մը ունենալ բանակցութեանց սկսման համար: Կը պահանջեց Ե. Միութեան ղեկավարներէն, որ որոշում մը կայացնեն», ըսած է ան՝ ակնյայտով, թէ այդ թուականը կ'ակնկալէ 2003 ընթացքին:

Երէկ հաւանական կը նկատուէր, որ Ե. Միութեան թուրքիոյ անդամակցութեան վերաբերեալ միջին եզրի լուծում մը գտնուի: Իսկ Թուրքիոյ իշխող Արդարութեան եւ Բարգաւաճման կուսակցութեան ղեկավար Թայիփ Էրտողան այսօր տեսակցութիւն մը պիտի ունենայ Ֆրանսայի եւ Գերմանիոյ ղեկավարներուն հետ:

Դիւանադէտ մը ըսած է, թէ այսօր կէսօրին կայանալիք ժողովին թուրք ղեկավարները պիտի պահանջեն 1 Մայիս 2004-ին առաջ թուական մը՝ բանակցութեան սկսման համար: Այդ թուականին 10 թեկնածու երկիրներ անդամ պիտի դառնան Միութեան:

Եթէ Անգարա նման յանձնառութիւն մը ձեռք ձգէ Ե. Միութեան, անիկա իր զօրակցութիւնը պիտի տայ կիպրոսի ՄԱԿի խաղաղարար ծրագրին:

Ֆրանսայի նախագահ ժաք Շիրաք եւ Գերմանիոյ վարչապետ Կերհարտ Շրէտթը առաջարկած են դիմել Եւրոպական Յանձնաժողովին, որ Դեկտեմբեր 2004-ին տեղեկագիր մը պատրաստէ թուրքիոյ տնտեսական եւ ժողովրդավարական բարեկարգումներուն մասին: Եթէ տեղեկագիրը զրական ըլլայ, Անգարա կրնայ ըստ ֆրանսեզերմանական առաջարկին՝ Յուլիս 2005-ին բանակցութեանց սկսիլ:

Այդ առաջարկը Ե. Միութեան ներս լայնածիր զօրակցութիւն ապահոված է, սակայն քանի մը երկիրներ, յատկապէս Բրիտանիա, Իտալիա եւ Յունաստան աւելի արագ օրակարգ կը պահանջեն նշեալ գործընթացին համար:

Իտալիոյ վարչապետ Սիլվիո Պրուտտիի երէկ զօրակցութիւն արտայայտած է 2004-ին բանակցութեանց սկսելու Թուրքիոյ պահանջին: Ապուլիա կիւլի հետ իր տեսակցութեան մէջ, ան թղթակիցներու ըսած է, որ Թուրքիոյ դատը պիտի պաշտպանէ «այնպէս, թէ անիկա իմ անձնական դատս է»:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՀԱՍ. - MAISON GABY

Տնային Ելեկտրական Առարկաներ - Home Appliances
Նոր Տարուան Բացառիկ Գիներ - Christmas Offers

Պուրճ Համուտ, մայր պողոտայ, դեղարան Արաքսի դիմաց, Հեռ.՝ 01/261630

ՄԱՍՆԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆՄԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆԱԶԳԱՅԻՆ

Վերականգնողական Գրգռիչ Պարահանդէս

Կիրակի, 5 Յունուար 2003
Երեկոյեան ժամը 9:30ԷՄ սկսեալ
PHOENICIA դանդոկին մէջ

Երգահանդէս

Երկուշաբթի, 6 Յունուար 2003,
Երեկոյեան ժամը 7:30ԷՄ սկսեալ,
UNESCO-ի սրահին մէջ

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէն - Obelix գրախանութ, Անթիլիա Աղբալեան մարզաշաղկաբային կեդրոն, Մրգիէր - Համազգայինի գրախանութ, Շաղկոյեան կեդրոն, Պուրճ Համուտ - Տիւրքիէր Գեկա, Պուրճ Համուտ - Սիւլիո Վաչէ, Երկաթէ կամուրջի մօտ, Հաճըն - Համազգայինի «Կոմիտաս» գրախանութ, Չոքաթ Էլ Պլաթ - Համազգայինի Լեւոն Շանթ կեդրոն, Պուրճ Համուտ

PHOTO NERSES

ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ - ՈՐԱԿԱՌՈՐ ԼՈՒՍԱԿԱՐԵՐ

Չոր ութան առիթներու լուսանկարմանը տպեցէ ճոր հասած ԱՐՈՂԻՎԱԿԱ ՕԻԳԻՏԱԼ մեքենայի միջոցով, որակաւոր եւ զանազան չափերով:

Ստանձնում՝ 20 վայրկեանում:

Լուսանկարմանը կարճամազերն ԸԾԻ եւ կամ FLOPPY տպեցիներու վրայ:

Cameraներու ճոխ հաւաքմանը, ապամօծելու եւ ցկարի շրջանակներու ըմտի տեսակաւ:

Կը ստանձնենք ուրախ առիթներու photo նկարահանումը, արդիական մեքենաներով եւ յարմարագոյն գիներով:

Պուրճ Համուտ, Զաղաքապետարանի փողոց,
«Սանթրը Արին» դիմաց, Հեռ.՝ 01-261858 եւ 01-255992

ԱՆՍԻԱԿ ԳՐԵՆՔ

● Ուղղագրութիւն Մրցանքը տեղի կ'ունենայ կիրակի, 15 Դեկտեմբերին, «Յակոբ Տէր Մեյրի»-ն է ան թատերասրահին մէջ, հետեւեալ ժամանակացոյցով.

- ժամը 9:00ԷՄ 10:00, 4րդ դասարան
- ժամը 10:00ԷՄ 11:00, 5րդ դասարան
- ժամը 11:00ԷՄ 12:00, 6րդ դասարան

● Մրցանքին մասնակցողները պետք է թատերասրահ գտնուին ժամը 8:45Ին (4րդ դասարան), 9:45Ին (5րդ դասարան) եւ 10:45Ին (6րդ դասարան):

● Մասնակցողները պետք է իրենց հետ ոչինչ ունենան: Գրեական պիտոյքները իրենց պիտի տրամադրուին սրահին մուտքին:

● Մրցանքին օրը, թատերասրահի մուտքին պիտի ցուցադրուին «Պատիկ - Մատիկ»-ի հասած բոլոր գծագրութիւնները:

● «Անսիակ գրենք»-ի արդիւնքները պիտի յայտարարուին «Պատիկ - Մատիկ»-ի Ուրբաթ, 20 Դեկտեմբերի թիւով:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել «Աղղակ»-ի 01-260115 թիւին: